Հավելված N 2
ՀՀ կառավարության 2022 թվականի
հոկտեմբերի 6-ի N 1562 - Լ որոշման

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱ-ԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿԱՄ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

քաղ. Երևան ____ _____ 2022 թ.

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ ի դեմս ծառայության պետ _____ -ի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից և _____ կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն)՝ ի դեմս գործադիր տնօրեն _____, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պայմանագրով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2024 թվականների ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության փոխանակության և դրամական միջոցների փոխանցման հետ կապված հարաբերությունները ծառայության և կազմակերպության միջև:
2. Սույն պայմանագրում կիրառվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝
   1) **ծրագիր՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 9-ի N 842-Լ որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2024 թվականների ծրագիր.
   2) **հիփոթեքային վարկ՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված՝ սոցիալական

աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում ընդգրկված գյուղական բնակավայրում անհատական բնակելի տուն կառուցելու կամ կառուցապատումը շարունակելու (ավարտին հասցնելու) նպատակով կարգն ուժի մեջ մտնելուց հետո տրամադրված վարկ.

3) **կարգ՝** Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2024 թվականների ծրագրի իրականացման կարգ.

4) **շահառու՝** Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառում ունեցող ամուսիններ, որոնցից առնվազն մեկը ծրագրին դիմելու օրվա դրությամբ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո կնքել է հիփոթեքային վարկի պայմանագիր՝ կազմակերպություններից որևէ մեկի հետ.

5) **աջակցության գումար՝** հիփոթեքային վարկի ամենամսյա վճարների (մայր գումարի և տոկոսագումարի) մարմանն ուղղված գումարի սուբսիդավորում ծառայության կողմից՝ որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով սահմանված սահմանաչափերով.

6) **հաշիվ՝** կազմակերպության բանկային հաշիվ, որին ծրագրի շրջանակներում ծառայությունը փոխանցում է աջակցության գումարը.

7) **սահմանամերձ բնակավայր՝** Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված՝ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկում ընդգրկված գյուղական բնակավայր:

3. Ծառայությունը պարտավորվում է կազմակերպության հետ վարկային պայմանագիր կնքած շահառուների համար սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում կազմակերպության հաշվին փոխանցել աջակցության գումարները:

4. Կողմերն անվերապահորեն ընդունում են, որ սույն պայմանագրի շրջանակներում կազմակերպության հաշվին փոխանցված աջակցության գումարները կարող են օգտագործվել բացառապես ծրագրին համապատասխան և չեն կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել շահառուի պարտավորությունների դիմաց, կամ որևէ կերպ կանխիկացվել:

II. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Կողմերն իրավունք ունեն՝
   1) սույն պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով դադարեցնելու պայմանագրի գործողությունը.
   2) օրենքով սահմանված կարգով բողոքարկելու մյուս կողմի գործողությունները և (կամ) անգործությունը.
   3) իրականացնելու օրենքներով նախատեսված այլ իրավունքներ:
6. Կազմակերպությունը պարտավոր է՝
   1) նախքան պոտենցիալ շահառուի և գործընկեր կազմակերպության միջև վարկային պայմանագրի կնքումը ծառայություն ներկայացնել անհրաժեշտ տեղեկությունները՝ սույն պայմանագրին կից N 1 ձևին համապատասխան.
   2) շահառուի հետ վարկային պայմանագիր կնքելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան ծրագրային ապահովման միջոցով ծառայությանը տրամադրել շահառուի հիփոթեքային վարկի պայմանագրի և վարկի գծով վճարման ժամանակացույցի էլեկտրոնային (ընօրինակից լուսապատճենված) տարբերակը, այդ թվում՝ վարկի փուլային ֆինանսավորման ժամկետներն ու համամասնությունը.
   3) շահառուի հետ վարկային պայմանագիր կնքելու դեպքում, վճարման ժամանակացույցի մեջ որպես վճարման օր սահմանել յուրաքանչյուր ամսվա 20-ը.
   4) շահառուների՝ հիփոթեքային վարկի գծով վճարման ժամանակացույցերում ցանկացած փոփոխության (վաղաժամ մարում, աջակցության այլ ծրագրերի շրջանակներում ստացված աջակցություն և այլն) դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ծառայությանը տրամադրել փոփոխված ժամանակացույցերը.
   5) ժամանակացույցով նախատեսված վճարումները (աջակցության գումարների սահմանա-չափերին համապատասխան) ծառայության կողմից չիրականացնելու դեպքում, ծառայությանը տրամադրել տեղեկատվություն ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ (վճարման ենթակա տույժեր, տուգանքներ)՝ դրանց ծագման պահից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

6) վարկի ֆինանսավորման 1-ին և 2-րդ փուլերի ավարտից հետո, նախքան վարկի հաջորդ փուլի ֆինանսավորումը, համապատասխան ծրագրային ապահովման միջոցով ծառայությանը տրամադրել նախորդ փուլով տրամադրված վարկի գումարի նպատակային օգտագործման մասին տեղեկատվություն.

7) ծրագրի շրջանակներում առաջին վարկային պայմանագրի կնքումից հետո՝ 6-ամսյա պարբերականությամբ ծառայությանն է ներկայացնում հաշվետվություն աջակցության գումարների օգտագործման վերաբերյալ՝ սույն պայմանագրին կից N 2 ձևին համապատասխան:

7. Ծառայությունը պարտավոր է՝

1) սույն պայմանագրի 6-րդ կետի 1-ին ենթակետում նշված տեղեկություններն ստանալուց հետո 8 աշխատանքային օրվա ընթացքում որոշմամբ սահմանված ծրագրի պահանջները բավարարող պոտենցիալ շահառուին համապատասխան ծրագրային ապահովման միջոցով՝ ինքնաշխատ եղանակով շնորհել շահառուի կարգավիճակ և մեկօրյա ժամկետում դրա մասին տեղեկացնել կազմակերպությանը.

2) ամսական պարբերականությամբ (մինչև տվյալ շահառուի համար նախատեսված դրամական աջակցության սահմանաչափի լրանալը) կազմակերպության հաշվին փոխանցել աջակցության գումարները.

3) ժամանակացույցով նախատեսված վճարումները (աջակցության գումարների սահմանաչափերին համապատասխան) չիրականացնելու դեպքում, վճարել ժամկետանց պարտավորությունների համար նախատեսված տույժերն ու տուգանքները.

4) «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ապահովել սույն պայմանագրի շրջանակներում իրեն հայտնի դարձած՝ բանկային գաղտնիք համարվող տեղեկությունների գաղտնիությունը:

III. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

8. Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները կողմերը մատուցում են անհատույց (անվճար): Սույն պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը չեն փոխհատուցվում:

IV. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

լրացուցիչ համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք կհանդիսանան սույն պայմանագրի անբաժանելի մասը:

10. Սույն պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:
11. Սույն պայմանագիրը լուծվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում: Պայմանագիրը լուծելու վերաբերյալ առաջարկությունը մի կողմը մյուս կողմին ներկայացնում է պայմանագրի լուծման նախատեսվող ժամկետից առնվազն երկու ամիս առաջ:
12. Սույն պայմանագիրը լուծվում է լուծման օրվա դրությամբ պայմանագրով ստանձնած պարտավորությունները կողմերի կողմից պատշաճ կատարվելու, ինչպես նաև չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու հետևանքով պատճառված վնասները լրիվ հատուցելու պայմանով:
13. Սույն պայմանագիրն իրավաբանական ուժ է ստանում այն կնքելու օրը:
14. Ծրագրի իրականացման գործընթացի ուղեկցումն իրականացվում է համապատասխան ծրագրային ապահովման միջոցով: Մինչև ծրագրային ապահովման ներդրումը գործընթացն իրականացվում է մեխանիկական եղանակով, իսկ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները ծառայության և կազմակերպությունների միջև փոխանակվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված միջոցներով (Սի-Բի-Էյ-Նեթ ֆինանսական կամ այլ բնույթի էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման համակարգ):

V. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միասնական սոցիալական ծառայություն _____

Գտնվելու վայրը _____	Գտնվելու վայրը_____
Հեռ. _____	Հեռ. _____
Էլ. փոստ _____	Էլ. փոստ _____
_____	_____
(անունը, ազգանունը)	(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

(ստորագրությունը)

Ձև N 1

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2022-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դաշտի անվանումը	**Բովանդակությունը**
1. **Կազմակերպություն**	
2. **Շահառուի և ամուսնու տվյալներ**	
2.1. Անուն, ազգանուն, հայրանուն	
2.2. Անձը հաստատող փաստաթուղթ	
2.3. Հանրային ծառայության համարանիշ	
2.4. Ծննդյան օր, ամիս, տարի	
2.5. Փաստացի բնակության վայրի հասցե	
2.6. Ամուսնության վկայականի համարը	**Կցվում է**
2.7. Էլեկտրոնային հասցե	
2.8. Հեռախոսահամար	
3. Կառուցվող անհատական բնակելի տան հասցե	
4. Հիփոթեքային վարկի գումարի չափը, ժամկետը, փուլերի համամասնությունը	
5. Կազմակերպության հաշիվը	
6. Կազմակերպությունը հավաստում է, որ շահառուն տվել է իր համաձայնությունը կառուցապատվող անշարժ գույքի (բնակելի տան) նկատմամբ սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով իր անվամբ գրանցելու վերաբերյալ	

Ձև N 2

Հաշվետվություն

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության 2022-2024 թվականների ծրագրի ներքո աջակցության գումարների օգտագործման վերաբերյալ

(օօ/աա/տտտտ - օօ/աա/տտտտ ժամանակահատվածի համար)

NN ը/կ	Վարկառուի ԱԱՀ	Վարկառուի անձը հաստատող փաստաթուղթ	Հաշվետու ժամանակահատվածում օգտագործված աջակցության գումար		Վարկի մնացորդը հաշվետու ժամանակահատվածի վերջին օրվա դրությամբ		Հաշվետու ժամանակահատվածում շահառուի կողմից կատարված վճարումներ		Շահառուի ժամկետանց պարտավորություններ		Ժամկետանց օրերի քանակ
			մայր գումար	տոկոսագումար	մայր գումար	տոկոսագումար	մայր գումար	տոկոսագումար	մայր գումար	տոկոսագումար	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

06.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ